

«ՇՆՈՂԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՀՈԱԿ-Ը ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹ՝
ԼԱԲՈՐԱՆՏԻ (0.5 ԴՐՈՒՅՔԱՉԱՓ) ԹԱՓՈՒՐ ՏԵՂԻ ՀԱՄԱՐ

Լաբորանտի տեղի համար վարձատրությունը նախատեսվում է 0.5 դրույքաչափ:
Մրցույթը կկայանա մեկ փուլով: Մրցույթին մասնակցելու համար անձը
հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին
հավակնում է,
2. Փաստաթուղթ (պետական նմուշի դիպլոմ) որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը, հանրային ծառայության համարանիշը,
4. Ինքնակենսագրություն,
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների
աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը
հավաստող փաստաթղթեր, հավաստագրերի պատճենները՝ դրանց առկայության
դեպքում,
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:
Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև
հունիսի 24-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10-ից մինչև 15-ը՝ բացի շաբաթ, կիրակի և ոչ
աշխատանքային օրերից: Մրցույթը տեղի կունենա հուլիսի 1-ին՝ ժամը 14-ին, 'Շնողի
բժշկական ամբուլատորիա' ՀՈԱԿ-ում: Հասցեն՝ գ. Շնող, 2-րդ փողոց, շենք 8: Հեռ.՝
(094) 10-50-50:

ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ